ԻՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1952—1953 ԹԹ.)

ԱՆՈՒՇ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Համաշխարհային երկրորդ պատերազմին հաջորդող տարիներին Իրանում ծավալված ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ 1951 թ. ապրիլի 29-ին իշխանության գլուխ անցավ Մոհամմեդ Մոսադեղի գլխավորած ազգային բուրժուազիայի կառավարությունը։

Ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակահատվածը (1951—1953 թթ.) ետպատերազմյան տարիներին իրանական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման կարևորագույն փուլերից մեկն է, որի համակողմանի լուսաբանման նշանակությունը չափազանց մեծ է այդ շարժման ամբողջական ընկալման և ճիշտ գնահատման համար։ Իրանի նորագույն պատմության այս կարևոր շրջանը հետազոտողներին առավելապես գրավել է նավթային պրոբլեմի տեսակետից։ Պատճառը, թերևս, ըմբռնելի է, եթե նկատի առնենք, որ Մոսադեղի գործունեության առաջնահերթ նպատակը, իրոք, նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի իրականացումն էր, շնորհիվ որի նա ակնկալում էր ապահովել Իրանի տնտեսական և քաղաքական անկախությունը[1]։

Նավթային հարստություններն Իրանին վերադարձնելու համար տևական և անգիջում պայքարին զուգընթաց, ազգային բուրժուազիայի կառավարությունը վարում էր ուշագրավ ներքին քաղաքականություն, որի քննությունը հավասարապես կարևոր է վերը հիշված խնդիրների պարզաբանման համար։

Ազգային բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականությունը քննելիս անհրաժեշտաբար հարկ է սահմանազատել միմյանցից որակապես զանազանվող երկու հիմնական փուլ։ Իշխանության սկզբնական շրջանում կառավարության ջանքերն ուղղված էին նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի իրականացմանը, հանգամանք, որն ինքնըստինքյան բացառում էր երկրի ներքին կյանքի որևէ բնագավառում նրա լիարյուն գործունեության հնարավորությունը։ Կառավարության ներքաղաքական գործունեությունն անհամեմատ բազմաբովանդակ և առավել ամբողջական դարձավ իշխանության երկրորդ փուլում, երբ Մոսադեղին ասպարեզից հեռացնելու տեղական հետադեմ ուժերի և օտարերկրյա իմպերիալիստների համատեղ փորձի անհաջողությունից հետո՝ 1952 թ. հուլիսի 22-ին, նա վերագրավեց իշխանությունը[2]։

1952 թ. հուլիսի 27-ին Մոսադեղը մեջլիսի հաստատմանը ներկայացրեց իր երկրորդ կառավարության ծրագիրը[3], որի բովանդակությունն աներկբայո-

---

[1] «اسناد نفت»، تهران، ۱۳۳۱، ص. ۹۱

[2] «کیهان», 22.VII.1952.

[3] «اطلاعات», 27.VII.1952.

րեն ցուցադրում էր ազգային բուրժուազիայի աշխարհայացքում, նաև քաղաքականության մեջ կատարված առաջադիմական տեղաշարժերը և վկայում էր նավթային սպասվող եկամուտներից անկախ, երկրի ներքին կյանքի գրեթե բոլոր բնագավառներում տիրող անսփոփ վիճակը հնարավորին չափ բարելավելու Մոսադեղի հաստատ մտադրության մասին։

Ծրագրում ընդարձակ տեղ էր հատկացված երկրի կազմալուծված տնտեսության վերականգնմանը[4]։ Առանց այն էլ թույլ զարգացած և նախորդ կառավարությունների քաղաքականության հետևանքով էլ ավելի քայքայված ազգային արդյունաբերությունը խթանելու նպատակով կառավարությունն ընտրեց երկու ճանապարհ.

1. Գործող արդյունաբերական ձեռնարկությունների ընդարձակում և նոր ձեռնարկությունների հիմնում.

2. Տարբեր պատճառներով շարքից դուրս եկած կամ փակված ձեռնարկությունների վերականգնում և վերաբացում։

Տնտեսական ծրագիրը կենսագործելու համար կառավարության կողմից տրամադրվող 50 մլն. դոլլար գումարից 31 մլն. դոլլարը նախատեսվում էր հատկացնել շաքարի, թեյի, տեքստիլ և հանքարդյունաբերական ձեռնարկությունների զարգացմանն ու ընդարձակմանը[5], շնորհիվ որի Մոսադեղը հույս ուներ ոչ միայն էականորեն բարվոքել երկրի տնտեսական վիճակը, այլև կրճատել երկրի վալյուտային ծախսերը։ Նման քաղաքականությունն, անտարակույս, մեծապես կնպաստեր նաև մեկ այլ՝ ազգաբնակչությանն աշխատանքով ապահովելու սուր պրոբլեմի մեղմացմանը։

Երկրի արդյունաբերության վիճակի բարելավմանը նպաստող նշանակալի միջոցառում էր արդյունաբերական հատուկ կազմակերպության («սազման-ե սանա-ե») հիմնադրման մասին օրենքի հրապարակումը[6]։ Կազմակերպությունը հիմնականում համաձայնեցնելու և պլանավորելու էր պետական ձեռնարկությունների գործունեությունը՝ նրանց արտադրական հզորության առավելագույն օգտագործման և արտադրանքի ծավալն ընդարձակելու նպատակով, ինչպես նաև միջոցառումներ էր մշակելու ազգային արտադրության ապրանքների տեսականին ավելացնելու ուղղությամբ։

Երկրի տնտեսությունն օտարերկրյա կախումից ազատագրելու և նրա ինքնուրույն զարգացման համար պայմաններ ապահովելու, ինչպես նաև ազգային քաղաքականության բուրժուազիայի դիրքերն ամրապնդելու՝ կառավարության քաղաքականության ուղղակի արտահայտություններից էր «Հանքային հարստությունների մասին» օրենքը, որը ստորագրվեց 1952 թ. դեկտեմբերի 24-ին[7]։

Համաձայն այդ օրենքի, երկրի հանքային բոլոր հարստությունները ստորաբաժանվում էին երեք խմբի։ Երրորդ խմբի հանքանյութերի (նավթամթերքներ, բնական գազեր, ռադիոակտիվ տարրեր) մշակման մենաշնորհը տրվում էր պետությանը։ Օրենքը, միաժամանակ, սահմանում էր մասնավոր ձեռնարկությունների իրավունքները և դրանց արդյունաբերական կոնցեսիա-

---

4 Նույն տեղում։

5 «اطلاعات», 25.VIII.1952.

6 «روزنامه رسمی کشور شاهنشاهی ایران», 1.IV.1953.

7 «اطلاعات», 27.XII.1952.

ներ տրամադրելու պայմաններ էր որոշում։ Ազգային արդյունաբերության վերականգնման ուղղությամբ կառավարության միջոցառումները չնայած հեռու էին բավարար լինելուց և այլևայլ պատճառներով լրիվ չիրականացվեցին, այդուհանդերձ դրականորեն ազդեցին արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման վրա։ Համաձայն պաշտոնական վիճակագրության, 1950 թ. համեմատությամբ 1953 թ. 44 հազ. տոննայով ավելացավ շաքարի արտադրությունը, 11 հազ. տոննայով՝ ցեմենտինը։ Զգալիորեն աճեց նաև գորգերի և գլանակների արտադրությունը[8], ընդարձակվեց որոշ հանքանյութերի արդյունահանումը[9]։

Նպատակ ունենալով զարգացնել երկրի գյուղատնտեսությունը և բարվոքել գյուղացիության վիճակը, ազգային բուրժուազիայի կառավարությունն այդ ուղղությամբ որոշակիորեն կարևոր քայլեր ձեռնարկեց։ Արդեն 1952 թ. հուլիսի վերջերին Մոսադեղը մի հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ «ջանալու է վերջ դնել գյուղացու վրա կալվածատերերի կողմից գործադրվող ճնշումներին»[10]։ Չփորձելով իսկ (և ի վիճակի էլ չլինելով) իրականացնել այդ ավելի քան հավակնոտ խոստումը, Մոսադեղը, այնուամենայնիվ, արդեն 1952 թ. հոկտեմբերի 12-ին հրապարակեց «Գյուղերում պարհակները վերացնելու մասին» օրենքը[11], որն ակնհայտորեն ուղղված էր կալվածատերերի կամայականությունների սահմանափակմանն ու գյուղացու շահագործման մեղմացմանը։ Խոշոր հողատեր-կալվածատերերի դեմ էր ուղղված նաև «Գյուղացու բաժնի ավելացման և գյուղատնտեսական բարեկարգող կազմակերպություն հիմնելու մասին» օրենքը[12]։ Այն նախատեսում էր կրճատել բերքից կալվածատիրոջ հասանելիքի, ինչպես նաև նրա մյուս եկամուտների 20%-ը, որի 10%-ը բաժանվելու էր հողը մշակող գյուղացիներին, իսկ մյուս 10%-ը տրամադրվելու էր գյուղական շրջանների բարեկարգման նպատակով հիմնվելիք մարմիններին։ Համաձայն այդ օրենքի, կազմակերպվելու էին գյուղական, շրջանային և նահանգային խորհուրդներ, որոնք և տնօրինելու էին կալվածատիրոջ հասանելիքի 10%-ը, և որոնց կազմում գյուղացիներն ունենալու էին պատշաճ թվով ներկայացուցիչներ։ Չնայած թերություններին, վերոհիշյալ օրենքն ուներ սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն։ Գյուղացու կենսավիճակի թեկուզ չնչին բարելավումը, բնականաբար, կնպաստեր նրա աշխատանքի առավել արդյունավետությանը, գյուղատնտեսական արտադրանքի ծավալի և գյուղատնտեսական հումքի արտահանության ընդարձակմանը։ Ագրարային հիշատակված օրենքների իրականացումից Մոսադեղի առաջնահերթ ակնկալությունը, սակայն, գյուղացիների դրությունն ինչ-որ չափով բարելավելու միջոցով նրանց դժգոհությունը մեղմելն էր, նրանց ընդվզումները զսպելը և, որ ամենակարևորն է, գյուղացիական զանգվածների շրջանում հեղինակություն վաստակելն ու ամուր դիրքեր ապահովելը։ Նույնպիսի նպատակներ էր հետապնդում նաև «Գյուղատնտեսական բանկի կանոնադրության մա-

---

8 „Economic Developments in the Middle East", 1954—1955, New-York, 1956. p. 33.

9 «Зарубежные страны», М., 1957, стр. 390.

10 «کیهان», 28.VII.1952.

11 Նույն տեղում, 13. VIII. 1952։

12 Նույն տեղում, 14 և 16. VIII. 1952։

սին» օրենքը[13], որն ուղղված էր ամեն կերպ աջակցելու գյուղում Մոսագեղի հիմնական հենարանը հանդիսացող միջին խավի՝ խորդեմալեքների և կոոպերացնող ընկերությունների գործունեությանը։ 1952 թ. օգոստոսին գյուղատնտեսության մինիստրությունը կառավարությանը ներկայացրեց ոռոգման և ամբարտակների կառուցման ընդարձակ ծրագիր, որը կենսագործվելու էր երեք տարում և որի վարկավորման համար նախատեսվում էր տրամադրել 1 մլրդ. 19 մլն. ռիալ[14]։ Նշված միջոցառումների շնորհիվ, զգալիորեն մեծացավ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը։ 1952 թ. համեմատությամբ 1953 թ. 380 հազ. տոննայով ավելացավ ցորենի արտադրությունը, 182 հազ. տոննայով՝ շաքարի ճակնդեղինը։ Նկատելիորեն աճեց բրնձի, բամբակի, զարու և այլ կուլտուրաների արտադրանքը[15]։

Հավատարիմ Իրանի համար ինքնուրույն զարգացման հնարավորություն ապահովելու իր քաղաքականությանը, իշխանության երկրորդ փուլում ազգային բուրժուազիայի կառավարությունը գործնական քայլեր ձեռնարկեց երկրի արտաքին առևտուրն օտարերկրյա ստրկական կախումից ազատագրելու ուղղությամբ։ 1952 թ. դեկտեմբերի 25-ին կառավարությունը հրապարակեց «Արտահանության խրախուսման և արտաքին առևտրի լիցենզիաներ տալու մասին» օրենքը[16], որը, մասնավորապես արտահանվող ապրանքները բազմատեսակ հարկերից ազատելու, նրանց փոխադրման հետ կապված ծախսերը կրճատելու և նորաստեղծ արտահանող ընկերություններին արտոնություններ տրամադրելու միջոցով նպատակ ուներ դյուրացնել և ընդարձակել տեղական արտադրանքի արտահանությունը։ Արտահանվող ապրանքները լավագույն ձևով ներկայացնելու և արտահանությունն աշխուժացնելու դիտավորությամբ ազգային տնտեսության մինիստրությունը ձեռնարկեց տնտեսական ներկայացուցչություններ և գործակալություններ հիմնել այն երկրներում, որոնց հետ Իրանը մտադիր էր առևտրական հարաբերություններ հաստատել[17]։ Արտաքին առևտրի բնագավառում ազգային բուրժուազիայի կառավարության ձեռնարկած նշանակալի միջոցառում էր նաև երկրի գրեթե բոլոր խոշոր քաղաքներում «առևտրի պալատների» («օթաղհա-ե բազերդանի») հիմնումը։ Վերջիններս կազմակերպվում էին «վաճառականներին համախմբելու և նրանց նախաձեռնությանն ուղղություն տալու, Իրանի և այլ երկրների միջև առևտրական կապեր հաստատելու և ընդլայնելու, վաճառականական ընկերությունների, ինչպես նաև առևտրա-տնտեսական ձեռնարկությունների և ազգային տնտեսության մինիստրության միջև սերտ համագործակցություն հաստատելու նպատակով»[18]։ Արտաքին առևտուրը կարգավորելու նպատակ էր հետապնդում նաև 1953 թ. հունվարի 22-ին կառավարության հրապարակած օրինագիծը՝ «Մաքսանենգների դեմ պայքարելու համար միջոցառումներ ձեռնարկելու և

---

13 «روزنامه رسمی کشور شاهنشاهی ایران», 1 VII.1953.

14 «اطلاعات», 19.VIII.1952.

15 „Economic Developments in the Middle East", p. 140.

16 «روزنامه رسمی کشور شاهنشاهی ایران», 25.XII.1952.

17 «اطلاعات», 2.VIII.1952.

18 «روزنامه رسمی کشور شاهنشاهی ایران», 1.I.1953.

նրանց բացահայտողներին խրախուսելու» մասին[19]։ Արտաքին առևտրի բնագավառում կառավարության եռանդուն գործունեությունը դրական արդյունքներ տվեց։ Իրանի ազգային բանկի վիճակագրության համաձայն՝ արդեն 1952/1953 թթ. Իրանի արտաքին առևտուրը ձերբազատվել էր արտահանության և ներմուծության միջև առկա մշտական ճեղքվածքից և ուներ աննախադեպ դրական սալդո (ներմուծում՝ 5031525 հազ. ռիալի, արտահանում՝ 5800303 հազ. ռիալի, սալդո — 768778 հազ. ռիալի)[20]։

Ազգային բուրժուազիայի կառավարության քաղաքականության մեջ դիտվող աստիճանական առաջադիմական տեղաշարժերն առավել ակնբախ դարձան նրա իշխանության ամենավերջին շրջանում։ Տնտեսության և, մասնավորապես, արտաքին առևտրի բնագավառում դրանց լավագույն արտահայտությունը եղավ սոցիալիստական երկրների և, հատկապես, Սովետական Միության հետ առևտրական հարաբերությունների հաստատումը, որը նշանավորվեց 1953 թ. հունիսի 10-ին առևտրական պայմանագրի կնքմամբ[21]։

Արտահայտելով իր կարծիքը պայմանագրի մասին, Իրանի տնտեսության մինիստր Ախավին առանձնապես ընդգծում էր, որ ՍՍՀՄ-ի և Իրանի միջև կլիրինգյան հիմունքներով ապրանքափոխանակության ծավալի ընդարձակումը մեծապես կնպաստեր իրանական վալյուտայի արտահոսքի կանխմանը[22] (պայմանագիրն Իրանին հնարավորություն էր տալիս տարեկան 1,110 մլն. ռիալի վալյուտա խնայել)[23]։ Եվ ապա, որ երկու երկրների տարածքային մոտիկությունը չէր պահանջի փոխադրական մեծ ծախսեր և, անկասկած, բարերար ներգործություն կունենար ապրանքների գների վրա։ Գնահատելով նոր պայմանագիրը, «Քեյհանն» իրավացի հույս էր հայտնում, որ իրանա-սովետական առևտրի ընդարձակումը զգալիորեն կմեղմեր Իրանի առևտրի բնագավառում առկա ճգնաժամը[24]։

Կառավարության այսպիսի քաղաքականության շնորհիվ Իրանի տնտեսական վիճակի բարվոքումը կնպաստեր նաև երկրի ֆինանսների կարգավորմանը, որոնք, սակայն, շարունակում էին մնալ ծանր դրության մեջ։ Պատճառը ոչ միայն այն էր, որ կառավարությունը դեռևս անհրաժեշտ միջոցառումներ չէր իրականացրել ազգայնացված նավթի հանույթը, մշակումն ու վաճառքը կազմակերպելու ուղղությամբ և դարձյալ զրկված էր դրա եկամուտներից[25] և ոչ էլ միայն ֆինանսների բնագավառում ձեռնարկված միջոցառումների անարդյունավետությունը, այլև այն, որ դեռևս թույլատրվում էր Միացյալ Նահանգներից «օգնություն» ստանալու ավանդական քաղաքականությունը։

---

19 «اطلاعات», 22.1.1953.

20 „Bulletin Bank Melli Iran", № 134, May, 1953, p. 125.

21 «باختر امروز», *10. VI. 1953.*

22 «کیهان», 16.VI.1953.

23 «Правда», 14. VI. 1953.

24 «کیهان», 13.VI.1953.

25 Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1952 և 1953 թթ. Իրանում նավթի տարեկան հանույթը 1.400.000 տոննա էր (1950 թ.՝ 31.750.000 տոննա)։

Իշխանության երկրորդ փուլում ազգային բուրժուազիայի կառավարությունը աշխույժ գործունեություն ծավալեց նաև երկրի ներքին կյանքի այլ բնագավառներում։

Արտակարգ լիազորություններ ստանձնելուն պես Մոսադեղը ձեռնամուխ եղավ ընտրական օրենքը բարեփոխելու իր վաղեմի մտադրության իրականացմանը[26]։ Ընտրական նոր օրենքը, որը հրապարակվեց 1952 թ. դեկտեմբերի 17-ին[27], թեպետ հավակնում էր ապահովել բոլոր ընտրողների իրավահավասարությունը և գործնական միջոցառումներ էր մշակում ընտրությունների ընթացքում հնարավոր կեղծիքներից խուսափելու համար, այնուամենայնիվ, զերծ չէր լուրջ թերություններից. օրենքը կանանց դարձյալ զրկում էր ընտրական իրավունքից։ Նոր օրենքի համաձայն, դեպուտատության թեկնածուները պարտավոր էին 20 հազ. ռիալ վճարել պետությանը։ Սահմանված դրամական ցենզը, անշուշտ, ինչ-որ չափով սահմանափակում էր մեջլիսում չունևոր առաջադեմ խավերի ներկայացուցիչների ընտրվելու հնարավորությունը։ 1952 թ. սեպտեմբերին հրապարակվեց «Քաղաքային և ավանային խորհուրդների ընտրության և քաղաքային վարչությունների անկախության մասին» օրենքի նախագիծը[28], որը նկատելիորեն ընդլայնում էր իշխանության տեղական մարմինների իրավասությունների շրջանակները։

1952—1953 թթ. ազգային բուրժուազիայի կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք անմիջապես ուղղված էին երկրի արդարադատության սիստեմի բարենորոգմանը։ 1952 թ. սեպտեմբերին արդարադատության մինիստրությունը հրապարակեց երկու օրինագիծ, որոնք շուտով օրենքի ուժ ստացան։ Օրինագծերից առաջինը վերաբերում էր դատավորներին աշխատանքի ընդունելու մասին օրենքի բարեփոխմանը[29], որի իրականացման դեպքում կառավարությունը հնարավորություն կստանար պաշտոնազրկել արդարադատության ոլորտում հետադիմական շրջանների դրածոներին։ Արդարադատության մինիստրության հրապարակած մյուս օրինագիծը Իրանում դեռևս գործող հատուկ դատարանները վերացնելու մասին էր[30]։ Կառավարության կողմից այդ դատարանների վերացումն արդեն իսկ առաջադիմական քայլ էր, որովհետև երկրի արդարադատության սիստեմը դառնում էր կուռ ու միասնական, իսկ դատարանների գործունեությունը՝ առավել անկախ. բացի այդ, օրինագիծը զգալիորեն սահմանափակում էր դատավորների կամայականությունների և կաշառակերության հնարավորությունը։ 1952 թ. նոյեմբերի 16-ին պրեմիեր-մինիստրի հաստատմանը ներկայացվեց «Գերագույն դատարանը և դատական կոլեգիայի կողմից օրինականության խախտումները քննող դատարանը վերացնելու մասին» օրենքի նախագիծը[31]։ Օրենքն արդարադատության մինիստրությանը պարտավորեցնում էր շուտափույթ կերպով լուծարքել

---

26 Ընտրական օրենքի վերափոխումը նախատեսվում էր դեռևս Մոսադեղի առաջին կառավարության ծրագրով։ Իշխանության առաջին շրջանում. սակայն, նրա իրագործման ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկվեց։

27 «اطلاعات», 17.XII.1952.

28 Նույն տեղում, 6. IX. 1952։

29 Նույն տեղում, 20. IX. 1952։

30 Նույն տեղում։

31 «اطلاعات», 16.XI.1952.

այդ դատարանների բաժինները և փոխել դրանց ղեկավարների ու աշխատակիցների կազմը։ Այդ ճանապարհով կառավարությանը կհաջողվեր հիշյալ դատարաններում ներգրավել իրեն նվիրված անձանց առավել մեծ քանակ։ Ձնաված արդարադատության բնագավառում կառավարության այս և մյուս միջոցառումները կիսատ-պռատ էին ու սահմանափակ, այդուհանդերձ նրանց իրականացումը երաշխավորում էր արդարադատության սիստեմի գոնե մասնակի բարեփոխություն, բուրժուա-դեմոկրատական իրավունքների ապահովում։

Դեռևս 1952 թ. օգոստոսին Մոսադեղի անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որին հանձնարարված էր նախապատրաստել երկրի առողջապահության վիճակը բարելավելու ռեալ նախագիծ[32]։ Այդ նախագիծը, որ կարճ ժամանակում մշակվեց և որպես օրինագիծ ներկայացվեց պրեմիեր-մինիստրի հաստատմանը, էական բարեփոխություններ էր նախատեսում առողջապահության գրեթե բոլոր բնագավառներում[33]։ Դարձյալ Մոսադեղի ցուցումով, 1953 թ. փետրվարի սկզբներին, կազմակերպվեց մեկ այլ հանձնաժողով, որի ուղղակի պարտականությունը ուսուցիչների աշխատանքը խրախուսելու նպատակով նրանց աշխատավարձի չափերի սահմանումն էր և ժողովրդական կրթության ասպարեզում բարեփոխություններ անցկացնելու ուղղությամբ օրենքների մշակումը[34]։ 1953 թ. պետական բյուջեով նախատեսվում էր ավելացնել առողջապահության և լուսավորության նպատակների հատկացումները[35]։

Երբ Իրանի ազգային բուրժուազիան իշխանությունն իր ձեռքը վերցրեց, արքունիքը դեռևս մնում էր իշխանության հիմնական կենտրոնը և շահը հրսկայական տիրապետող դեր ուներ երկրի քաղաքական կյանքում։ Այդ հանգամանքը ծայրաստիճան սահմանափակեց ազգային բուրժուազիայի կառավարության գործունեության շրջանակները և, փաստորեն, նրան զրկեց լիակատար ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից։ Շահի նկատմամբ Մոսադեղի քաղաքականությունը հիմնվում էր «շահը պետք է թագավորի և ոչ իշխի»[36] սկզբունքի վրա, որի նպատակը միմիայն շահի իշխանության սահմանափակումն էր և ոչ միապետության ընդհանրապես վերացումը, ինչպես փորձում է ներկայացնել բուրժուական պատմագրությունը։ Մոսադեղը ոչ միայն հանրապետություն հաստատելու որևէ դիտավորություն չէր հետապնդում, այլև շահի նկատմամբ նրա քաղաքականությունը իշխանության ողջ շրջանում խիստ վարանոտ էր և անվճռական։ Օպոզիցիայի օրըստօրե սաստկացող դիմադրությունը զսպելու և իր իշխանությունը պահպանելու համար Մոսադեղին կենսականորեն անհրաժեշտ էր իր ձեռքում կենտրոնացնել մինչ այդ արքունիքի կատարյալ ենթակայության տակ գտնվող ռազմական ուժերը։ Մոսադեղի այս պահանջը, սակայն, տիրող շրջանների կողմից դարձյալ ընկալվեց որպես շահին իշխանությունից մեկուսացնելու ուղղակի սպառնալիք և հանդիպեց այնպիսի բուռն հակազդեցության, որ Մոսադեղը

---

32 Նույն տեղում, 25. VIII. 1952։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, 2. II. 1952։

35 Նույն տեղում, 24. V. 1952։

36 L. Binder, Iran. Political Development in a Changing Society, Berkeley and Los Angeles, 1962, p. 94.

ստիպված էր հրաժարական տալ[37]։ Սակայն ժողովրդական լայն զանգվածների անձնազոհ պայքարի ու աջակցության շնորհիվ իշխանության գլուխ վերադառնալուց և արտակարգ լիազորություններ ու ռազմական մինիստրի պաշտոնը ձեռք բերելուց հետո ևս, Մոսադեղի անհետևողականության պատճառով, բանակի գործերին շահի ամենագործոն միջամտության հնարավորությունը չվերացավ, քանի որ բանակի ղեկավարությունը թողնվեց հետագեմ տարրերի ձեռքին։ Այս պարագայում զարմանալի չէ, որ Մոսադեղի կողմից իշխանությունը վերագրավելուն պես նախկին պաշտոններին մնացած միապետական սպաները վերսկսեցին իրենց դավադիր գործունեությունը, որի ակնհայտ դիտավորությունը Մոսադեղին վերստին տապալելն էր[38]։

Կառավարման երկրորդ փուլում Մոսադեղի ողջ քաղաքականությունը և, մասնավորապես, իր իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ նրա վճռական ձեռնարկումները, որոնք գերակշռաբար բախվում էին արքունիքի շահերին, է՛լ ավելի սրեցին շահի հետ նրա փոխհարաբերությունները։ 1953 թ. փետրվարի 28-ին շահն Իրանից հեռանալու փորձ արեց[39]։ Ընդ որում, իրերի գրությունն այնպես էր ներկայացվում, որ, իբր, շահն Իրանը թողնում է Մոսադեղի ճնշման ու հարկադրման հետևանքով։ Այսպիսի պատճառաբանությունը կարող էր ճշմարտակերպ հնչել, եթե հիշենք նաև, որ այդ իրադարձությունն անմիջապես հաջորդում էր վերջին շրջանում Մոսադեղի մի շարք այնպիսի միջոցառումներին, որոնք ուղղակիորեն սահմանափակում էին շահի իշխանությունը։ Այսպես, 1953 թ. հունվարի 10-ին Մոսադեղը մեջլիսից պահանջեց ևս մեկ տարով երկարաձգել իրեն տրամադրված արտակարգ լիազորությունների ժամկետը[40]։ Հունվարի 19-ին մեջլիսը նրա այդ պահանջը բավարարեց[41]։ Գրեթե միաժամանակ Մոսադեղը սկսեց գործնական քայլեր կատարել բանակում իր ազդեցությունն ամրապնդելու ուղղությամբ, որն առաջին հերթին արտահայտվեց արքունիքի հետ սերտորեն կապված որոշ բարձրաստիճան սպաների պաշտոնազրկմամբ։ Մոսադեղը նաև մեջլիս առաջարկություն մտցրեց բռնագրավել ու պետականացնել շահի կալվածքները և դրանից սպասվող եկամուտներն ի սպաս դնել Իրանի տնտեսության ֆինանսավորմանը[42]։ Փետրվարի վերջերին արդեն շահի և Մոսադեղի փոխհարաբերությունները այնքան էին սրվել, որ կազմվեց մեջլիսի յոթ ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով՝ նրանց միջև ծագած տարաձայնությունները քննելու համար[43]։ Այսպիսի պահին Իրանից մեկնելու մասին շահի վճիռը, այն էլ վերը հիշատակված պատճառաբանությամբ, նպատակ ուներ Մոսադեղին վարկազրկել հասարակության աչքում, որոշակի խավերի գրգռել և ոտքի հանել նրա դեմ՝ ի պաշտպանություն շահի և, վերջապես, համապատասխան իրադրություն նախապատրաստել պետական հեղաշրջման համար։ Այնուամենայ-

---

37 «اطلاعات», 17.VII.1952.

38 «ستاره», 4.VIII.1952.

39 «اطلاعات», 28.II.1952.

40 Նույն տեղում, 10. I. 1953։

41 Նույն տեղում, 19. I. 1953։

42 W. E. Warne, Mission for Peace. Point 4 in Iran, New York, 1956, p. 242.

43 «اطلاعات», 25.II.1952.

նիվ, այս անգամ ևս վերահաս հեղաշրջումը հնարավոր եղավ կանխել՝ շնորհիվ շահի և նրա դաշնակիցների դեմ երկրի առաջադիմական ուժերի զանգվածային, հզոր դիմադրության։

Մոսադեղի ինքնուրույն գործունեության հնարավորությունը մեծ չափով սահմանափակում էր նաև կառավարությանն ընդդիմադիր մեջլիսը։ 16-րդ գումարման մեջլիսում, որը Մոսադեղին հաստատեց պրեմիեր-մինիստրի պաշտոնում, տիրապետում էր ռեակցիոն մեծամասնությունը[44], և Մոսադեղի կողմնակիցների թիվն ընդամենը ութն էր[45]։ Արտաքուստ պարադոքսային դիտվող այս ակտն առկա իրադրության մեջ միանգամայն ըմբռնելի էր. անգլո-իրանական նավթային ընկերության դեմ ծավալված համաժողովրդական շարժման թափը և նրա սպասելի հետևանքները, նաև Մոսադեղի լայն ժողովրդայնությունն ու նրա նկատմամբ եղած ջերմ համակրանքը երկրում ստեղծել էր այնպիսի մի մթնոլորտ, երբ մեջլիսի բացահայտ դիմադրությունը կարող էր հանգեցնել անցանկալի արդյունքների։ Իշխանության արդեն իսկ ամենասկզբում, սակայն, մեջլիսի մեծամասնության օբստրուկցիոնիստական քաղաքականությունն այնպիսի չափեր ընդունեց, որ Մոսադեղի գործունեությունն, իրականում, անհնար էր դառնում[46]։

Մոսադեղի հույսերը չարդարացրեց նաև 17-րդ գումարման մեջլիսը։ Ամենակոպիտ ու բացահայտ կերպով միջամտելով ընտրությունների ընթացքին (ընտրություններն սկսվեցին 1952 թ. հունվարին)[47], Մոսադեղը ջանացել էր հնարավորին չափ շատ կողմնակիցներ ներգրավել մեջլիս, սակայն շատ շուտով այնտեղ ևս նրա դեմ օպոզիցիա էր ստեղծվել, և Մոսադեղի գրեթե բոլոր նախաձեռնությունները հանդիպում էին մեջլիսի դիմադրությանը։ Օպոզիցիայի հակազդեցությունն առավել սաստկացավ Մոսադեղի իշխանության երկրորդ փուլում, երբ նա ձեռնամուխ եղավ անհամեմատ առաջադեմ քաղաքականության։ Մեջլիսում և սենատում լուրջ տարաձայնություններ առաջացրեց վեցամսյա արտակարգ լիազորություններ ստանձնելու Մոսադեղի խնդրանքը, որի նպատակը Իրանի ներքին կյանքում բարեփոխություններ անցկացնելու միջոցով երկիրը տնտեսական ճգնաժամից փրկելն էր[48]։ Եթե որոշ դեպուտատների դիմադրության պատճառը միմիայն անվստահությունն էր Մոսադեղի հնարավորությունների նկատմամբ և անհանգստությունը, որ նման նախադեպը կարող էր վատ օրինակ ծառայել գալիք կառավարությունների համար, ապա դեպուտատների ճնշող մեծամասնությունը Մոսադեղին արտակարգ լիազորություններ տրամադրելը հանդուգն ոտնձգություն էր համարում սահմանադրության դեմ և բացահայտ սպառնալիք՝ մեջլիսի հետագա գոյությանը[49]։ Անբարյացակամորեն ընդունվեցին նաև ներքին կյանքի տարբեր

---

44 Dj. Tavallol, Le parlement Iranien, Lausanne, 1954, p. 146.

45 Նույն տեղում։

46 ملکی، تاریخچه جبهه ملی، تهران، ۱۳۳٤، ص. ۳۸

47 «شمیم، ایران در دورهٔ سلطنت اعلیحضرت محمد رضا شاه پهلوی» تهران، ۱۳٦٦، ص. ٦۵

48 «اطلاعات», 13.XII.1952.

49 Մեջլիսում և սենատում Մոսադեղի վեցամսյա արտակարգ լիազորությունների պահանջի քննարկման նյութերից՝ հրապարակված մամուլում։

բնագավառներում կառավարության դրեթե բոլոր բարեփոխական միջոցառումները։ Սուր հակազդեցության տեղիք տվեցին ռազմական մինիստրի պարտականությունները ստանձնելու Մոսադեղի պահանջը, ինչպես և շահի իշխանությունը սահմանափակելու նրա մյուս փորձերը։ Բուռն տարաձայնությունների հանդիպեցին նաև Մոսադեղի արտաքին քաղաքականության շատ կողմերը։ Այսպես, մեջլիսի դեպուտատների մի մասը դժգոհ էր Անգլիայի նկատմամբ Մոսադեղի դիրքորոշումից և, մասնավորապես, նավթային խնդրի վճռման Անգլիայի առաջարկած տարբերակները մերժելու հանգամանքից։ Կառավարության նկատմամբ մեջլիսի թշնամական վերաբերմունքն այնքան ակնհայտ էր, որ «էթթլա՝ աթ» կիսապաշտոնաթերթը դատապարտում էր մեջլիսի այն դեպուտատներին, «...ովքեր իրենց հարձակումներով ու վիրավորանքներով տարաձայնություններ են առաջացրել կառավարության և մեջլիսի միջև և խախտել նրանց միասնականությունը»։ «Մեր կարծիքն այն է,— դրում էր թերթը, —որ դ-ր Մոսադեղի կառավարությանը պետք է օգնել, որ կարողանա դժվարությունները հաղթահարել։ Երկրի այսօրվա վիճակն ավելի քան երբևէ կարիք ունի, որ կառավարությանը պաշտպանեն, աջակցեն և նրա հետ համագործակցեն...»[50]։ Մեջլիսում Մոսադեղի դրությունը հատկապես վատթարանում էր այն պատճառով, որ նրա հիմնական հենարանը՝ «Ազգային ճակատը», իր կազմի մեջ մտնող առանձին խմբավորումների և առանձին գործիչների միջև միասնականության բացակայության հետևանքով, փաստորեն, տրոհվել էր։ Նպատակների էական տարբերությունների հետևանքով, որոնք առավելապես խորացել էին կառավարման երկրորդ փուլում, Մոսադեղից հեռացել և հակառակորդների կողմն էին անցել նրա նախկին համախոհներից շատերը։

Արդեն 1953 թ. ամռանը Մոսադեղի դեմ օպոզիցիան մեջլիսում այնպիսի չափեր էր ընդունել, որ համագործակցության և քիչ թե շատ նորմալ աշխատանքի հնարավորությունը միանգամայն բացառվում էր[51]։ Այդ պատճառով էլ Մոսադեղը հուլիսի 25-ին դեկրետ հրապարակեց մեջլիսը հանրաքվեի միջոցով ցրելու մասին[52]։ «...Ժողովրդի կամքը,— հայտարարեց նա,— օրենքից վեր է»[53]։ Կառավարության հակառակորդները հանդես եկան հանրաքվեի դեմ։ Վերոհիշյալ միջոցառումը դիտելով հակասահմանադրական ակտ, մեջլիսի նախկին նախագահ, կրոնական գործիչ և Մոսադեղի երբեմնի դաշնակից Քաշանին կրոնական խիստ բոյկոտ հայտարարեց հանրաքվեին[54]։

Չնայած օպոզիցիայի կատաղի դիմադրությանը, օգոստոսի 3-ին հանրաքվեն, այնուամենայնիվ, սկսեց անցկացվել[55]։ Օգոստոսի 10-ին հանրաքվեի արդյունքները հայտնի դարձան. մասնակիցների 99,93%-ը քվեարկել էր հօգուտ մեջլիսի արձակման[56]. Մոսադեղի բացարձակ հաղթանակն է՛լ ավելի

---

50 «اطلاعات», 1.XII.1952.

51 R. N. Frye, Iran, London, 1953, p. 107.

52 D. N. Wilber, Contemporary Iran, New York, 1963, p. 98.

53 «داختر امروز», 27.VII.1953։

54 «اطلاعات», 29.VII.1953.

55 D. N. Wilber, նշվ. աշխ., էջ 99։

56 „The Middle East Journal", vol. 7, № 4, 1953, p. 510.

գրգռեց երկրի հետադիմական շրջաններին և ավելի որոշ դարձրեց նրան ասպարեզից հեռացնելու վերջիններիս դիտավորությունը։

Օպոզիցիայի ոտնձգություններին դիմակայելու և իր քաղաքականությունն իրականացնելու համար Մոսադեղին վստահելի հենարան կարող էր ծառայել երկրի դեմոկրատական ուժերի և, մասնավորապես, Իրանի ժողովրդական կուսակցության (ԻԺԿ) հետ համագործակցությունը, որը, սակայն, այդպես էլ, բացառությամբ առանձին փոքրաթիվ պահերի, չկայացավ։ Դրա հիմնական պատճառը, թերևս, նրանց նկատմամբ Մոսադեղի երկակի դիրքորոշումն էր։ Ներքին և արտաքին թշնամիների դեմ պայքարում ավելի քան հոժարությամբ ընդունելով դեմոկրատական ուժերի աջակցությունը, կառավարությունը, միաժամանակ, խուսափում էր նրանց հետ համագործակցելուց, ավելին, ջանում էր խոչընդոտել նրանց գործունեությունը։ Բավական է հիշատակել, որ ազգային բուրժուազիայի իշխանության ողջ շրջանում ԻԺԿ-ն զրկված էր լեգալ գործելու հնարավորությունից։ Միացյալ Նահանգները, որոնք հույսեր էին կապում Մոսադեղի կառավարության հետ, լավ էին պատկերացնում, թե ինչի կարող էր հանգեցնել նրա համագործակցությունն ԻԺԿ-ի հետ և բոլոր միջոցներով աշխատում էին կանխել այդպիսի մերձեցման հնարավորությունը։

Ազգային բուրժուազիայի կառավարության և Իրանի ժողովրդական կուսակցության հարաբերությունների վրա տարբեր ժամանակներում էական ազդեցություն են գործել նաև ԻԺԿ-ի քաղաքականության մեջ տեղ գտած որոշ սխալներ, որոնք հիմնականում հետևանք էին ազգային բուրժուազիայի էության և Իրանի հակաիմպերիալիստական պայքարում նրա տեղի ու դերի թյուր պատկերացման[57]։ Անկարող լինելով սահմանազատել «Ազգային ճակատի» տեսակետներով, նպատակներով, նաև քաղաքականությամբ միմյանցից էականորեն տարբերվող աջ և ձախ խմբավորումները, ԻԺԿ-ն երկար ժամանակ Մոսադեղին և նրա համախոհներին էր վերագրում «Ազգային ճակատի» աջ թևի պարագլուխների՝ Բազարգանի, Մաքքիի և այլոց՝ իրոք հակաժողովրդական, պրոռեակցիոն և պրոիմպերիալիստական գործունեությունը, իր մամուլի էջերում նրանց ներկայացնելով որպես իրանական ժողովրդի դավաճաններ և ամերիկյան լրտեսներ։

Մոսադեղի կառավարության ներքին քաղաքականությունն իրականացվում էր հօգուտ Իրանի ազգային բուրժուազիայի, նրա դասակարգային շահերի՝ հեռու լինելով որևէ ասպարեզում արմատական վերափոխության նպատակից։ Այսուհանդերձ, մասնավորապես իշխանության երկրորդ փուլում (1952—1953 թթ.), Մոսադեղի ներքաղաքական գործունեությունը բավական խոստումնալից էր և նրա (թեկուզ սահմանափակ և թերի) բարեփոխական միջոցառումների և առաջադիմական այլ ձեռնարկումների կենսագործումը երաշխավորում էր տիրող վիճակի զգալի բարելավում։ Այդ ձեռնարկումները, սակայն, հիմնականում մնացին անկատար, քանի որ Մոսադեղը, որպես իր դասակարգի իսկական ներկայացուցիչ, անընդունակ եղավ սկսած գործը հետևողականորեն ավարտել։ Մոսադեղի անվճռականության հետևանքով այդ միջոցառումները գերակշռաբար ձեռնարկվեցին մեծագույն ուշացումով, բառացիորեն կառավարության տապալման նախօրեին, որը և բացառեց դրանց իրականացման հնարավորությունը։ Մոսադեղի առաջադիմական միջոցա-

[57] «دنیا»، سال پنجم، شماره سوم، ۱۳۴۳، ص. ۲۱۵»

ռումների իրագործումը գրեթե անկարելի դարձավ նաև այն պատճառով, որ դրանք մշտապես բախվում էին տեղական հակակառավարական շրջանների և նրանց հովանավոր ու աջակից ամերիկյան իմպերիալիզմի ամենախիստ հակադրեցությանը։ Արդեն իսկ իր կոչումով ազգային բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականությունը, անշուշտ, անկարող էր որևէ չափով գոհացնել ժողովրդական լայն զանգվածների սպասելիքները և պահպանել Մոսադեղին աջակցելու նրանց նախկին պատրաստակամությունը։ Բոլոր այս հանգամանքները ի վերջո նպաստեցին Մոսադեղի կառավարության տապալմանը։

ВНУТРЕННЯЯ ПОЛИТИКА ПРАВИТЕЛЬСТВА НАЦИОНАЛЬНОЙ БУРЖУАЗИИ ИРАНА (1952—1953 гг.)

АНУШ СТАМБОЛЦЯН

Резюме

Период правления правительства национальной буржуазии Ирана (1951—1953) является одним из важнейших этапов национально-освободительного движения иранского народа в послевоенные годы.

Определенный интерес представляет исследование внутренней политики правительства, которая стала более интенсивной и многосторонней в результате некоторых обстоятельств на втором этапе правления (1952—1953). Усилия правительства в этот период были направлены на обеспечение необходимых условий для независимой и самостоятельной деятельности.

Реформы и мероприятия правительства в основном проводились с позиций ограниченных классовых интересов иранской национальной буржуазии и далеко не претендовали на коренные преобразования в какой-либо отрасли. Однако их осуществление гарантировало хотя бы частичное улучшение существующего положения.